



# Ազդարարության Trumpet's Sound ինո՞ն

51-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱՆԻԱ  
ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿԱՏԵՄԲԵՐ 2020





# Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBridge,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: pastor@armenianbrethren.org  
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՌԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերքը Սիդնեյի Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերքը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցենով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արցախ.....	Հովիվ՝ Հրաչ Գույուճյան
Մեր սերնդի ամենատխուր աշունը .....	Անժելա Հարությունյան
14,000 քմ .....	Դալար Խաչոյան
Խաղաղություն .....	Դուռ Սթորմը
Ո՞վ մեղք է գործում՝ մեղքի ծառա է.....	Քաղված
Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (5) .....	QMBC պանորամա
Իմ մամկության օրերից շատ անգամ ինձ մեղեցին .....	Վարդան Սարգսյան
Պատերազմ .....	Հակոբ Ժաք Խաչոյան
Վաղը .....	Դուռ Սթորմը
Մենք քաջալերանքի կարիք ունենք,	
երբ հիլասաթափված ենք .....	Դոկտ. Զեսլով Բասսարա
Աստծո արհեստանոցում .....	Վեր. Հովհեփ Հովսեփյան
Գերիւները .....	Հովիվ՝ Գառնիկ Աբրելյան

## Արցախ

**Պ** “Ա կարող է հասկանալ իմ ցավը:

Քայլեցի նրա փողոցներով, երեկոներ անցկացրի Արցախի հայերի հետ, խմեցի նրանց ջուրն ու կերա նրանց կերակուրք: Ծիծաղեցի երիտասարդների հետ ու լացեցի ծերերի հետ: Միասին աղոքեցինք և Աստծուն երկրպագեցինք: Ես հասկանում եմ, թե ինչ է նշանակում հայրենի երկրից հեռանալ, թողնել տունը ու նրա հետ կապված յուրաքանչյուր հիշողություն:

Այս վերքը բաց է, խորունկ է, և սպիները երկար ժամանակ կմնան: Մարդիկ սգում են, լացում են, բողոքում են, սակայն այսպիս չպետք է լիներ: Նրանք հարցնում են, թե արդյոք կա՞ մեկը, որ կարող է իրենց ցավը հասկանալ: Նրանք գիշեր ու ցերեկ ցավի մեջ են, կա՞ մեկը, որ կարող է իրենց օգնել: Նրանք կորցրել են իրենց հույսը, ուրախությունը և խաղաղությունը: Նրանք զայրացած են, վիրավորված են և իրենց դավաճանված են զգում:

Սակայն Աստված սիրում է բոլոր մարդկությանը: Նա սիրում է ձեզ և Իր արցունքները բափում է ձեզ համար այսօր: Միայն Նա է հասկանում, միայն Նա է հոգ տանում, միայն Նա կարող է սրբել ձեր արցունքները: Նա այդպիս կամի, եթե պարզապես մոտենաք Իրեն ու Իր մեջ հանգստանաք, մնաք Իր կողքին ու թույլ տաք, որ գրկի ու միսիթարի ձեզ: Գնացեք և պատմեք Նրան ձեր ցավի մասին, ցույց տվեք վերքերը, և Նա ցույց կտա Իր վերքերը ու հանգիստ ձայնով կասի ձեզ. «Հասկանում եմ»:

Դուք գիտեք, որ եթե չխնամեք այս վերքը, ապա այն կվարակվի ու ձեզ համար լուրջ խնդիրներ կստեղծի: Ամեն բան աղոքքով Տիրո՞ջը տարեք: Խնդրե՛ք Նրան բուժել ձեզ ու հեռացնել այդ ցավը: Միայն Հիսուսը կարող է դա անել, միայն Նա կարող է միսիթարել ու բուժել կոտրված սիրտը, միայն Նա կարող է վերականգնել ու կրկին առողջացնել ֆիզիկապես ու հոգեպես:

Ընտրությունը ձերն է. կա՞մ շարունակելու եք նայել ձեր վերքերին

ու քոյլ եք տալու, որ ցավը կործանի ձեր օրը, կա՞մ վերցնելու եք ձեր խնդիրները ու Տիրոջ առջև եք ներկայանալու: Թողեք ձեր ցավերը Նրա ուժերի մոտ և քոյլ տվեք, որ Նա գրադի դրանցով:

Ամենագեղեցիկ խոսքը, որ Հիսուսն ասաց Իր աշակերտներին նախքան Իր համբարձումը, սա էր. «Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ»: Սա է ձեզ անհրաժեշտ դարմանը. Հիսուսին ունենալ ձեր սրբառում: Դուք Նրա խաղաղության կարիքն ունեք, որպեսզի ձեր վերքերը բուժվեն, և ձեր սիրտը նորոգվի: Երբ սովորեք ձեր սրտից հեռացնել վիրավորանքն ու ատելությունը, այդ ժամանակ ուրախությունը կգա, և շուտով կակտք երգել նոր երգ, քանի որ իինը անցավ, և ամեն բան նոր է լինելու:

Մրա համար Հիսուսը եկավ: Նա եկավ, որպեսզի կյանք ունենանք, և այն լիովի ունենանք: Վեր կացեք և փնտրեք Նրա մաքրությունը: Այդ ժամանակ հաղթական կլինեք, քանի որ մեր հաղթությունը Հիսուս Քրիստոսի մեջ է:

Հ. Գ.

## **Մեր սերնդի ամենատխուր աշունը**

2020 թ.-ի սեպտեմբերի 27: Թվում էր՝ տարվա հերթական օրերից մեկն էր լինելու: Սակայն ուղեկցող խաղաղությունը վերածվեց անխաղաղության, ժախտը վերածվեց լացի, ուրախությունը՝ տխրության, մանկան անհոգությունը՝ վախ ու սարսափի. բոլորին պատեց հարազատին կորցնելու տագնապը:

Սկսվեց հերթական պատերազմը Հայաստանի և Արցախի հայության դեմ, թշնամու հերթական ահաբեկչությունը՝ հայ ազգը ոչնչացնելու ու երկրի երեսից բնաջնջելու նենգ ծրագրով: Պատերազմ, որն անվերջ ու անլուծելի է թվում...

Հայաստանի Հանրապետության և Արցախի հայերը կրել են մարդկային ուժի, տնտեսական և ֆինանսական կորուստներ: Զոհվածնե-

ոի թիվն անցել է 4000-ի սահմանը, բազում ընտանիքներ զրկվել են իրենց տան ճրագից՝ հայրերից, որդիներից, եղբայրներից: “Դպրոցներն ու մանկապարտեզների մեծ մասն ավերվել են, և որ մարդասիրական խելամիտ հասկացողությունից վեր է՝ հիվանդանոցներն ու ծննդատներն են ռմբակոծվել: Անաստված ահարենկիչների գործելանք:

Աշխարհի տարբեր անկյուններից հայերը միաբանվեցին՝ իրենց լավագույնն անելու, օգնելու ՀԱՅ-ին: Սփյուռք, պետական հաստատություններ, կազմակերպություններ, հիմնադրամներ, անհատ ձեռնարկատերեր, անհատներ հավաքվեցին մեկ հարցի շուրջ՝ աջակցել առաջնազգում պատերազմող զինվորին, Արցախից Հայաստանում ապաստան գտած մայրերին ու զավակներին, տարեցներին: Եվ որ ամենակարևորն է՝ քրիստոնյա հավատացյալ եղբայրներն ու քոյները համախմբվեցին՝ աղոքքներն առ Աստված բարձրացնելու համար:

«Արմինյան Քրիչըն Սիշըն» հիմնադրամը նոյնակա օգնության ձեռք մեկնեց՝ պետական հաստատություններին, ինչպես նաև մեզ դիմող արցախահայությանը տրամադրելով անհրաժեշտ պարագաներ: Մինչև օրս մեզ են դիմել հինգ հազարից ավելի արցախահայ ընտանիքներ՝ աջակցություն ստանալու նպատակով: Տրամադրել ենք մեծահասակի և մանկական տար հագուստ, գործված ծածկոցներ, սննդամբերք, գրենական պիտույքներ և այլ անհրաժեշտ պարագաներ: Ցանկացողներին նվիրել ենք Աստվածաշունչ քրիստոնեական գրականություն: Նաև իրենց կողքին ենք եղել՝ Աստծո խաղաղությունը, սերը, ողորմությունն ու հոգատարությունն առատորեն բաժնեկցելու մեծ առանձնաշնորհմանք:

Հատկապես պատերազմի սկզբնական շրջանում շատ կանայք, մայրեր, ովքեր ռազմաճակատ էին ճանապարհել իրենց հարազատներին՝ ամուսիններին, տղաներին, եղբայրներին, հոգեբանական մեծ աջակցության կարիք ունեին, քանի որ տագնապի և անորոշության մեջ էին նրանցից լուր չունենալու պատճառով: Անհամբերությամբ և անհանգստությամբ հետևում էին լրատվական միջոցներին, որ տեղեկություն ունենան նրանցից և իրենց բնակարաններից: Շատերն էին

գալիս ու անհանգստացած պատմում, որ կորցրել են բնակարանը, հողամասը: Պատմում էին զոհված եղբայրների, հայրերի մասին: Երեխանները հրաժարվում էին խաղալիք վերցնելուց, իրենց խաղից՝ նշելով, որ միայն իրենց հայրերին են ցանկանում տեսնել, գրկել: Մի խումբ երեխանների մոտ վախի ազդեցությունից խախտվել է ֆիզիոլոգիական և տարիքային զարգացման նորմալ ընթացքը: Շատ տարեց պապիկներ և տատիկներ, չիմանալով այս մեծ ցավին, կյանքից հեռացան:

2020 թվականի նոյեմբերի 10-ին կնքվեց հրադադարի համաձայնագիր, որը ցնցեց ամբողջ աշխարհի հայությանը. հանձնել թշնամու կողմից գրավված հողերը: Բազմաթիվ արցախցիներ ստիպված լրեցին իրենց բնակարանները, հողը, Հայրենիքը: Շատերն իրենց խև ձեռքբերով այրեցին իրենց տունը: Աղբբեջանի սահմանում մնացին պատմամշակութային բազում շինություններ, եկեղեցիներ:

Ցավը մեծ է, շատ անպատասխան հարցեր կան, շատ հայորդիներ դեռ չեն գտնվել, ծնողներն ու հարազատները զգիտեն՝ ո՞ղջ են արդյոք, թե՞ զոհվել են հանուն Հայրենիքի: Անխաղաղ է քաղաքական ասպարեզը...

Լուծումն անհնարին է թվում, անհնարին՝ մարդու համար, բայց ոչ Աստծո: Մեր Աստվածը մեծ է և ողորմած, բարի է ու անաշառ: Շարունակական աղոքքների անհրաժեշտությունը շատ է: Պետք է շատ աղոքենք, աղոքենք ճշմարիտ խաղաղության, հոգիների փրկության, Աստծուն ավելի քան երբեմն վստահելու համար:

**Աստված օգնական բոլորին:**

Տերն ունի միխթարություն, հույս, խոստում, սեր, ողորմություն, շնորհ: «Դադարեցրո՛ ձայնդ լալուց ու աչքերդ արտասուլից, որովհետև քո գործը պիտի վարձատրվի, - ասում է Տերը, - նրանք կվերադառնան թշնամու երկրից» (Երեմ. 31:16):

**Անժելա Հարությունյան**



## **14,000 քմ**

**Ա**վատրակիայից 14,000 քմ հեռավորության վրա պատերազմ է: Աղբեջանը հարձակվեց արցախահայության վրա:

2006 և 2007 թվականներին առիթ ունեցա մի քանի շաբաթով այցելել այս գեղեցիկ վայրը, հանդիպել մարդկանց հետ, ժամանակ անցկացնել գյուղերում, խաղալ տեղաբնակ մանուկների հետ ու սովորեցնել նրանց Հիսուսի՝ հավիտենական կյանքի խոստման մասին:

Յուրաքանչյուր օր լսում եմ վերջին հակամարտության լուրերը: Մտահոգված եմ այս մարդկանց համար, այն մանուկների համար, որոնց այդ տարիների ընթացքում հանդիպել են: Նրանցից շատերը այժմ այն տարիքում են, որ պատրաստ են իրենց տները, ընտանիքները և հողը պաշտպանելու համար կռվելու. հող, որի վրա նրանք ավելի երկար են ապրել, քան նրանք, ովքեր ուժի լեզվով ուզում են խլել այն:

Երեկ «NSW»-ի օրենսդիր մարմինը ընդունեց Արցախի հանրապետության անկախությունը՝ 61:2 հարաբերակցությամբ: Փաստարություն նաև դատապարտեց բնիկ արցախահայության դեմ Աղբեջանի ու Թուրքիայի սանձագերծած հարձակումները: Ես շատ շնորհակալ եմ մեր երկրի իշխանությանը այդ անարդարությունների դեմ խոսնելու համար:

Սակայն հակամարտությունը դեռ շարունակվում է:

Պատերազմը մեծ գող է. այն կյանքեր է խլում՝ բողնելով մեզ սարսափիների հիշողությունը, որին ընդունակ ենք: Այն ցուցադրում է մարդկային սրտի սարսափելի չարիքներ գործելու ընդունակությունը ու հիշեցնում մեզ կյանքի փխրունության ու մահվան վշտի մասին:

Ես աղոթում եմ խաղաղության, արդարության և պատերազմի պարտի համար: Բայց այս կյանքում դրանց հասնելու ոչ մի խոստում չկա: Մարդկային իմաստությունն այնքան թերի ու սահմանափակ է, որ նոյնիսկ ամենահանճարեղ մտքերն ու սրտերը չեն կարող կատարյալ արդարություն ապահովել այս ահավոր իրավիճակում: Քա-

Այս որ նույնիսկ եթե ռումբերը չպայթեն, ու գենքերը լոեն, միևնույն է, կան զոհվածներ, որոնց պետք է հողին հանձնել: Եվ ո՞վ պետք է արդարություն տա նրանց:

Կա միայն մեկ Անձ, ով կարող է. Նա, ով ոչ միայն մահացավ, այլև հարություն առավ: Միայն Աստծո կատարյալ Որդին՝ Հիսուս Քրիստոսը, կարող է տևական արդարություն և խաղաղություն բերել:

Նա այնպիսի արդարություն է բերում, որը ճշմարիտ է, որը չի սակարգվում, փոխսպազման չի ենթարկվում և չի լռեցվում: Այն արդարություն է, որը քննում է ու երևան է հանում յուրաքանչյուր անձի սրտի խորհուրդները: Այն ահեղ, կատարյալ արդարություն է: Ես չեմ ուզենա հանդիպել այդ արդարությանը, քանի որ գիտեմ, որ սիրտս մեղքի խորունկ ջրիոր է. հաճախ եսասիրություն, զայրույթ և ատելություն եմ պահել այնտեղ:

Խաղաղություն նույնպես կա: Խաղաղություն, որը գերազանցում է այս պատերազմին, այս կյանքին ու մահին: Այն Հայր Աստծո հետ խաղաղությունն է: Այն հասանելի է բոլորին՝ տղամարդկանց, կանաց և մանուկներին, բոլոր նրանց, ովքեր Քրիստոսին են դիմում որպես Տիրոջ:

Ուստի աղոթում եմ Աստծո արդարության համար, քանի որ այն ճիշտ է: Աղոթում եմ Աստծո ողորմության համար, քանի որ առանց դրա ես կողքինիս նման մեղավոր եմ: Նաև աղոթում եմ խաղաղության համար, որպեսզի այս հակամարտության երկու կողմերի յուրաքանչյուր տղամարդ. կին ու մանուկ ճաշակի Հայր Աստծո տևական խաղաղությունը, որը մեզ հասավ Իր Որդու ցուցաբերած ողորմության շնորհիվ:

2000 տարի առաջ աշխարհը ականատես եղավ ուազմական ամենամեծ հանցագործությանը, մարդկությունը քացահայտեց իր մեղավոր սրտի խորությունը, երբ հեռացավ Աստծուց ու սպանեց Նրա Որդուն: Աստված քույլ տվեց, որ դա տեղի ունենա, որովհետև ոչ թե անզոր էր, այլ այս մեծագույն չարագործության շնորհիվ մենք պիտի ճաշակեինք մեր հավիտենական Աստծո մեծագույն խաղաղությունը:

Խնդրում եմ աղոթե՛ք խաղաղության, արդարության և պատերազմի ավարտի համար, նաև որ շատ երկրներ հետևեն «NSW»-ի խորհրդարանի և այլ ազգերի օրինակին, ովքեր դատապարտեցին Արցախի ժողովրդի նկատմամբ իրազործված անարդարությունները: Աղոթե՛ք նաև մարդկանց համար, որպեսզի յուրաքանչյուրը Հիսուսի մեջ գտնի Աստծո հավիտենական խաղաղությունը:

Դալար Խաչոյան

## **Խաղաղություն**

**Կ**ատ հարցեր կան, որոնք անընդհատ տալիս ենք մեզ շրջապատող իրարանցման ժամանակ: Ի՞նչ է խաղաղությունը: Արդյոք այն պարզապես պատերազմի բացակայությունն է: Արդյոք այն կապունի շրջապատող իրավիճակի<sup>9</sup>, թե՝ մեր ներքին զգացումների հետ: 2-րդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1945 թ.-ին, աշխարհի շատ երկրներում ակտիվ մարտեր չեն եղել: Բայց արդյոք սա՝ է ճշմարիտ խաղաղությունը:

Մենք խաղաղություն ենք փնտրում աշխարհում: Շատ երկար ժամանակ իրար հետ վիճել ենք: Հիշում ենք Տեր Հիսուսի ծննդյան պահին հրեշտակների բերած պատգամը. «Երկրի վրա խաղաղություն, մարդկանց մեջ հաճություն»: Հարց ենք տալիս, թե արդյոք երբեւ կզա՞՞ այդ ժամանակը: Այո՛, կզա՞: Բայց նախ անիրաժեշտ է արմատական փոփոխություններ կատարել: Աշխարհի վրա ճշմարիտ և տևական խաղաղություն կլինի միայն այն ժամանակ, երբ Տեր Հիսուսը վերադառնա աշխարհ և հաստատի Իր Հազարամյա թագավորությունը:

Մեզ շրջապատող եղելություններին նայելով՝ պետք է հիշենք Տեր Հիսուսի զգուշացումը, թե պատերազմներ ու պատերազմների լուրեր պիտի լսենք նախքան ամեն ինչի վերջը: Մարդու սիրտն այնքան չար է, որ չենք կարող երկարատև խաղաղություն ակնկալի այնքան

Ժամանակ, քանի դեռ Տեր Հիսուսը չի ղեկավարում: Այնուամենայ-նիվ, մեր շուրջը ստեղծված իրավիճակները չպետք է մեզ հուսահա-տության տանեն: Պողոսը մեզ պատվիրեց թագավորների, իշխանա-վորների և բոլոր մարդկանց համար աղոթել, որպեսզի խաղաղ ու հանդարտ լյանք վարենք կատարյալ աստվածաշտությունով ու պարկեշտությունով (Ա Տիմ. 2:2): Մենք աղոթում ենք կառավարութ-յունների և խաղաղության համար, որպեսզի կարողանանք հավա-տարմորեն ապրել Աստծո առջև ու շարունակել մարդկանց վկայել:

Ավելի վաղ հարցրինք, թե արդյո՞ք ակտիվ մարտերի ավարտը խա-ղաղություն կարելի է համարել: Ո՞չ այդքան: Մենք բնազրորեն զգում ենք, որ խաղաղությունն ավելին է, քան ակտիվ ռազմական զործո-ղությունների կամ ատելության ավարտը: Մեծ մասամբ մենք մեզ հաճգիստ չենք զգում: Մեր վերաբերմունքի և դիրքորոշման մեջ ան-հանգստություն կա: Սրա պատճառն այն է, որ խաղաղությունը ներ-քին իրողություն է: Մեր մտքերն ու սրտերը պետք է խաղաղ լինեն: Շշմարիտ խաղաղությունը անձնական կյանքի ներքին հանգստութ-յունն է, այնպես որ որտեղ էլ լինենք, խաղաղության մեջ կլինենք: Եթե խաղաղություն կա, ապա հանգիստ ու հանդարտ կլինենք ու վտանգի զգացում չենք ունենա: Այդ ժամանակ խաղաղությունը կհաստատվի թե՛ մեր մեջ և թե՛ մեզ շրջապատող իրավիճակներում:

## Խաղաղություն Աստծո հետ

Չնայած որ արդարացի է աշխարհում խաղաղ ապրելու մեր փա-փազը, սակայն շատ ավելի կարևոր է այն, որ Աստծո հետ խաղա-ղություն ունենանք: Պողոսը գրեց, որ հավատքով արդարացած լինե-լով՝ խաղաղություն ունենք Աստծո հետ մեր Տիրոջ Հիսուս Քրիստո-սի ձեռքով (Հոռմ. 5:1): Մենք՝ հավատացյալներս, զիտենք, որ կար մի ժամանակ, երբ Աստծո առաջ թշնամի էինք: Մենք Նրա դեմ ապր-տամբած մեղավորներ էինք: Բայց երբ հավատացինք Տեր Հիսուսին, մեր մեղքերը ներվեցին, և անմիջապես խաղաղություն հաստատվեց Աստծո հետ: Սա փորձառություն է, որը կարող ենք ունենալ այստեղ և հիմա: Մենք չենք սպասում մահվանը, որպեսզի պարզենք, թե արդ-յո՞ք Աստված ընդունել է մեզ:

Փիլիպպեի եկեղեցուն գրելով՝ Պողոսը 4:7-րդ համարում խոսեց Աստծո խաղաղության մասին, որը ամեն մտքից վեր է և պաշտպանում է մեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով: Իր օգտագործած բառը հուշում է կայազորի կամ պահապանի մասին, որը հրակում է մեր կյանքի յուրաքանչյուր ոլորտ: Իր մեջ գտնվելը նման է ամրոցի մեջ գտնվելուն, որտեղ պատսպարված ենք ապահովության և սրբության մեջ:

Աստծո՝ ամեն մտքից վեր եղող խաղաղության մասին խոսելուց հետո Պողոսը խոսեց խաղաղության Աստծո մասին: Նա իր ընթերցող-ներին հիշեցրեց, որ եթե նրանք ամեն իր սովորեցրածները (որ տեսան իր կյանքում), ապա խաղաղության Աստվածը նրանց հետ կի-նի (Փիլիպ. 4:9): Պողոսը ավելին է ասում Բ Կորնք. 13:11-ում. «Վերջապես, եղբայրներ, ո՞չ եղեք: Հաստա՛տ մնացեք, միսիթարվեցեք, միաբա՛ն եղեք, խաղաղությա՛նք վարվեցեք, և սիրո ու խաղաղության Աստվածը ձեզ հետ պիտի լինի»:

Աստծո հետ Խաղաղություն ունենալը հնարավոր է, եթե ունենք Աստծո խաղաղությունը, որը գալիս է խաղաղության Աստծուց: Այս ներքին հանգստության կարիքը բոլորս ունենք: Այն ներքին խաղաղության զգացում է, որն Աստծո Հոգին տալիս է մեզ: Մենք գիտենք, որ այդ խաղաղությունը մեր բաժինն է՝ համաձայն Հիսուսի Խոսքերի. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թե՝ ինչպես աշխարհն է տալիս, Ես տալիս եմ ձեզ: Ձեր սիրտը թող չխռովվի, ո՞չ ել վախենա» (Հովհ. 14:27): Սա խաղաղություն է, որը գտնում ենք միայն Նրա Անձի մեջ (Հովհ. 16:33):

Խաղաղություն երկրի<sup>o</sup> վրա: Անհավատները ծաղրում են երկրի վրա խաղաղության ու մարդկանց մեջ հաճության մասին սուրբծննդյան պատգամը: Բայց մի օր գալու է ճշմարիտ խաղաղությունը: Մինչև այդ ժամանակի գալը մենք Երանելիների մեջ ունենք այս խոստումը. «Երանի՝ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. 5:9): Թող որ մենք լինենք խաղաղարարների շարքում:

Դոն Սթորմը

## «Ո՞վ մեղք է գործում՝ մեղքի ծառա է...» (Հովհ. 8:34)

 ամակարգչային վիրուսները վնասակար ծրագրեր են, որոնք կարող են ավերել տվյալների բազան և վերացնել օգտակար տեղեկությունները: Հենց որ համակարգիչը միանում է, դրանք ակտիվանում են մյուս ծրագրերից շուտ և «ճնշում» դրանց: Հակավիրուսային ծրագրերի օգնությամբ հնարավոր է դառնում հայտնաբերել այդպիսի վիրուսները և վնասազերծել դրանք:

«Վիրուս» նշանակում է հիվանդություն առաջացնող միկրոօրգանիզմ: Բազմաթիվ վիրուսների շարքում, որոնք կարող են վարակել մարդուն, կա մեկ յուրահատուկ վիրուս, որն ազդեցություն է բռնիում մեր ամրող հության վրա: Դա մեղքն է: Այն օրից, երբ մեղանչեցին առաջին մարդիկ, մեզնից յուրաքանչյուրի մոտ կա այդ վաստ արմատը՝ մեր ներքին մեղավոր բնությունը (համեմատի՛ր Հոք 14:4-ի հետ): Մեղքը համակարգչային վիրուս է հիշեցնում այն իմաստով, որ «ակտիվանում է» նախքան մեր գիտակցելը: Դա այն արմատն է, որտեղից սկիզբ են առնում չար մտքերը, բառերն ու արարքները:

Շատերը նոյնիսկ չեն կասկածում, որ գտնվում են մեղքի իշխանության տակ: Ումանց դա չարչարում է, այդ պատճառով էլ նրանք ուզում են ազատվել այդ բերից: Աստված մեզ առաջարկում է այդ ազատությունը: Չնայած մեղքը չի անհետանում, քանի դեռ այս երկրի վրա ենք, այդուհանդերձ, մենք կարող ենք ազատվել դրա իշխանությունից: Մենք ձեռք ենք բերում նոր բնություն, նոր կյանքի սկիզբ, երբ մեր սրտերը մաքրվում են՝ հավատալով Տեր Հիսուս Քրիստոսին:

Այդ նոր բնությունը համակցվում է Աստծո կամքի հետ: Դրա համար հավատացյալը Սուրբ Հոգու առաջնորդության ներքո կարողանում է ապրել երջանիկ կյանք և ազատվել ճնշող մեղավորությունից:

Քաղված

## Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (5)

**Q**մյուտնիայի եկեղեցու անդամները պետք է անցնեին սարսափելի հալածանքների ու տառապանքների միջով, բայց չպետք է վախենային, ոչ էլ փորձեին փախչել դրանցից: Տերն ասաց նրանց. «Սինչև մահ հավատարի՞ն եղիր, և քեզ կտամ կյանքի պսակը» (Հայտ. 2:10): Նա նրանց շխոստացավ ազատություն այս կյանքի տառապանքից. այն, ինչ խոստացավ, կյանքի պսակը տալն էր, որը խորհրդանշում է նրանց կրած բոլոր տառապանքների վրա լիակատար հաղթանակը: Նրանք հավիտյան ապրելու են, իսկ նրանց հալածողները փորձառելու են երկրորդ մահը (Հայտ. 2:11): Այսօր շատ հավատարիմ քրիստոնյաներ հալածվում են: Նրանք կարող են միսիարվել Եկեղեցուն տրված Տեր Հիսուսի այս խոսքերից:

Պերգամոնի եկեղեցու անդամները հանդուրժում եին Եկեղեցու ներսում գտնվողներին, ովքեր չարագործություններ էին անում, կուորելին զոհարերված կերակուր էին ուսում, սեռական անբարոյականություն էին գործում և Նիկողայոսյանների (այսինքն՝ հոգևորականների և հոգևորականության համակարգի) վարդապետության էին հետևում: Պերգամոնը հեթանոսական կրոնի խոշոր կենտրոն էր՝ իր տաճարներով և հարակից չար գործառույթներով: Սրանք մուտք գործեցին Եկեղեցի, և հոգևորականությունն ու հոգևորականության համակարգը հաստատվեց: Հավատացյալները պետք է ապաշխարեն, այլապես կենքարկվեն Տիրոջ դատաստանին: Ապաշխարությունը ներառում է առաջին գործերին վերադառնալը (հմմտ. Հայտ. 2:5):

Թիվատիրի Եկեղեցիներից մի քանիսը ավելի փշացած էին, քան Պերգամոնում գտնվող Եկեղեցիները: Թիվատիրի Եկեղեցում հեթանոսական տարրեր սովորություններ էին մուտք գործել (Հայտ. 2:24): Այս մերդերը ընդունվում էին, փոխանակ հանդիմանվեին (հմմտ. Եփես. 4:14-15, Բ Տիմ. 3:16): Բայց մի քանիսը մաքուր մնացին: Նրանք պետք է ամուր պահեն իրենց ունեցածը մինչև Տիրոջ գալուստը:

Սարդիկեի եկեղեցին գրեթե ոչ մի հոգևոր կյանքի նշան չէր ցուցաբերում: Նրա կյանքը խեղիված էր կրոնական և հեթանոսական ծեսերով: Պերգամոնի եկեղեցու նման հավատացյալները պետք է ապաշխարեն, այլապես կենքարկվեն Տիրոջ դատաստանին: Նա ասաց. «Գոյի պես գալու եմ քո վրա, և բնավ չես իմանալու, թե որ ժամին եմ գալու քո վրա» (Հայտ. 3:3):

Ֆիլադելֆիայի եկեղեցու դեմ, ինչպես նախորդ հոդվածներում նշեցինք, ոչ մի բողոք չի ներկայացվել: Չնայած քիչ էր նրանց ուժը, սակայն նրանք օգտվեցին բաց դրսերից (հնարավոր է՝ այստեղ խոսքը միսիոներական աշխատանքի մասին է, որը նրանք գուցե կատարում էին այլ քաղաքներում կամ երկրներում): Նրանք պահեցին համբեռատար լինելու և տուկայու Տիրոջ պատվիրանը, ուստի Նա նրանց ասաց. «Ես էլ քեզ պահելու եմ փորձության ժամանակ, որ գալու է ամբողջ աշխարհի վրա՝ երկրիս երեսին բնակվողներին փորձելու համար» (Հայտ. 3:10-11):

Լավոդիկեի եկեղեցուն, ինչպես նախորդ հոդվածներում նշեցինք, ոչ մի գովասանքի խոսք չէր ասվել, քանի որ ոչինչ չկար, որ Տերը կարող էր գովել: Նրանք կարծում էին, թե ամեն ինչ լավ է, բայց ոչինչ էլ լավ չէր: Թվում է, թե նրանք հանցավոր էին դրամասիրության և աշխարհասիրության մեջ, փոխանակ Քրիստոսին սիրելու (հմմտ. Ա Տիմ. 6:10, Ա Հովհ. 2:15-17): Նրանք պետք է վերադառնային ու զնահատեին Տեր Հիսուսին ու Նրանից մաքրություն, սրբացում և հոգևոր ճշմարիտ տեսողություն ստանային: Տիրոջ խրատը սպասում էր նրանց, եթե այդ ամենը չանեին: Նա պատրաստվում էր մերժելու այս եկեղեցուն, սակայն սիրո վերջին կոչն արեց նրանց, որպեսզի փոխեն իրենց ուղիները ու Իրեն վերադառնան (Հայտ. 3:20): Մենք չգիտենք՝ արդյոք նրանք այդպես արեցի՞ն, թե՞ ոչ, սակայն պատմությունից գիտենք, որ 361 մ.թ.-ին Լավոդիկեի ժողովում Նոր Կտակարանի կանոնը հաստատվեց:

## 6. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Մենք տեսանք, որ Հայտնության գիրքը Աստվածաշնչի այն գիրքն է, որը հայտնում է Տեր Հիսուս Քրիստոսին Իր ողջ փառքով: Նա Հովհաննեսին ասաց. «Ես Նա եմ, որ ապրում եմ, մեռած էր, և ահա՝

կենդանի է հավիտյանս հավիտենից, ամեն. և ունեմ դժոխքի և մահվան բանալիները»: Սակայն դա նաև Աստվածաշնչի այն գիրքն է, որը համախմբում է Հին Կտակարանում ներկայացված տարրեր մարգարեությունները: Այն նաև ներկայացնում է վերջին իրադարձությունները, որոնք տեղի են ունենալու (Եբր. 1:11-12, Հայտ. 21:1):

2-րդ և 3-րդ գլուխները պարունակում են յոթ նամակներ, որոնք ուղղված են այդ ժամանակ գոյություն ունեցող յոթ եկեղեցիներին: Մենք դրանք դիտարկեցինք որպես այդպիսին, սակայն նաև որպես առաքելական օրերից մինչև վերջին օրերի եկեղեցու պատմության մարգարեություն: Մենք համեմատեցինք նամակների բովանդակությունը եկեղեցու պատմության վերջին 2,000 տարվա մեջ տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Հաջորդ մի քանի դասերը լայնորեն կներառեն Հայտնության գրքի դատաստանները, որ գալու են երկրի վրա Տիրոջ եկեղեցին Իր Հոր տուն տանելուց անմիջապես հետո:

(Վերջ)

## **«Իմ մանկության օրերից շատ անգամ ինձ նեղեցին»**

**Սաղմոս 129:1-8**

**H** սրայելը կամ Երուսաղեմը հաճախ կործանվել ու վերակառուցվել է: Նրա համար շատ պատերազմներ են մղվել: Սաղմոսեր գիշը հենց դա է ասում, որ մանկությունից Խարայելին շատ են նեղել՝ սկսած նրա կազմավորումից մինչև մեր օրերը: Եզիստոսում եզիստացիները չարչարեցին իրեաներին, Մովսեսի առաջնորդությամբ Եզիստոսից դուրս գալիս փարավոնի բանակը փորձեց ոչնչացնել նրանց, մինչև Քանանի երկիր հասնելը ամմոնացիներն ու մովարացիները հաց ու ջուր չտվեցին նրանց, ընդհակառակը՝ Բաղաամին վարձեցին, որպեսզի անիծի այդ ժողովրդին (Բ Օր. 23:4), Ամաղեկը պատերազմեց, Քանանի երկիր 7 ազգերը նեղեցին, Դատավորների շրջանում հարևան ազգերը նրանց հանգիստ չտվեցին, Եսրերի գրր-

քում Համանը շար ծրագրով ուզեց կործանել նրանց....: Սակայն համարի շարունակությունն ասում է. «Բայց ինձ չհաղթեցին»: Նկատե՛ք, որ «Իմ մանկության օրերից շատ անգամ ինձ նեղեցին» արտահայտությունը հեղինակը կրկնում է 1-2-րդ համարներում, և միայն 2-րդ համարի վերջում է ավելացնում «Բայց ինձ չհաղթեցին» խոսքը:

Սաղմոսերգիշը շեշտում է, որ այդ նեղությունները սաստիկ ու շարունակական են եղել, բայց իրենք չեն պարտվել, այլ ընդհակառակը՝ հաղթել են, և խոսքը ոչ թե բարոյական կամ փիլիսոփայական հաղության մասին է, ոչ թե կեղծ միսիքարական հաղության, այլ իրական, համոզիչ ու փաստացի: Պատմությունն էլ վկայում է իմ ասածի ճշմարտացիությունը:

Ինչո՞ւ կամ ինչպե՞ս հաղթեց Իսրայելը. բազուկի ուժո՞վ, խելքո՞վ, հարստությա՞մբ: Ի՞նչ է ասում Աստվածաշունչը: Իսրայելը հաղթեց ոչ թե քննամիներին քանակով գերազանցելու պատճառով, ոչ թե ուժեղ և արդար լինելու, այլ քանի որ Աստծուն էր հուսացել, ով ողորմած է, և ուս մոտ շատ փրկություն կա: Սաղ. 130:7-ում կարդում ենք. «Իսրայելը թող Տիրոջը հուսա, քանի որ Տիրոջ մոտ ողորմություն կա, ու Նրա մոտ առատ փրկություն կա»: Բանալի բառը հուսալն է: Այսինքն՝ պարզապես այն փաստը, որ Աստված ողորմած է, ու Նրա մոտ շատ փրկություն կա, չէր կարող Իսրայելին ազատել: Այստեղից սովորում ենք, որ կարենոր է Աստծո ողորմությանը հուսալը: Հույսդ, Վստահությունն վերցրո՞ւ քո խելքից, ուժից, կարողությունից, ծանոթներից ու Նրա վրա դի՞ր: Այդ ժամանակ հաղթություն կունենաս:

Հայ ազգի ու իրեաների միջև շատ նմանություններ կան՝ սկսած երկու ազգերի կազմավորումից, մղած պատերազմներից, վերջացրած ցեղասպանությունով և մերօրյա գոյապայքարի պատմությամբ: Համաձայն եմ, որ Աստվածաշնչում Իսրայելին ուղղված երկրավոր խոստումները բացառապես Իսրայելին են վերաբերում, և երկրիս վրա որևէ ազգ իրավունք չունի դրանք իրեն վերագրելու, սակայն ուզում եմ շեշտել, որ Աստվածաշնչում գրված Աստծո բնավորությունը բոլոր ազգերի համար է: Մենք՝ որպես ազգ, կարող ենք օգտվել Աստծո բնավորությունից, Նրա ողորմությունից, փրկությունից: Ին կոչն էլ հենց սա է՝ մեր մեղքերից դարձի գալ ու մեր հույսն ու վըստահությունը Աստծո վրա դնել:

Եկեղեցին նոյնպես իր մանկությունից (հիմնադրումից) շատ ներություններ է կրել ու կրում է, սակայն վատահ գիտենք, որ չի պարտվելու՝ համաձայն Հիսուսի այն խոսքի, որ ասաց Պետրոսին. «Այս վեմի վրա պիտի շինեմ Իմ Եկեղեցին, և դժոխքի դրները չեն հաղթահարելու այն»: Եկեղեցին չի պարտվելու, ոչ թե որովհետև ինքն իրենով ուժեղ է, արդար է, այլ քանի որ Տիրոջն է հուսացել, ում մոտ ողորմություն ու շատ փրկություն կան:

Վարդան Սարգսյան

## **Պատերազմ**

**Ե**թեկվա լուրը ծանր էր ընդունել: Այն ինձ ստիպեց հարցեր տալ Աստծուն, ինչպես Դավիթը արեց: Ինչո՞ւ այս պատերազմն այսպես ավարտվեց: Ինչո՞ւ ամբարիշտները բարգավաճում են, իսկ արդարները՝ տառապում:

Առավտոյան՝ արևածագին, երբ դեռևս անկողնու մեջ էի, ստացա հարցերիս պատասխանը: Ես չեմ կարող ասել, որ Երկնքից ձայն լսեցի, սակայն սրտիս մեջ շշուկ ունեցա, որը ստիպեց մտածել ու վերանայել աղոքքիս կետերը:

Ես աղոքել էի՝ (1) պատերազմի ավարտի համար, (2) խաղաղության համար, (3) մեր դեկավարների համար, որ վերին իմաստություն ստանան, (4) քարացած սրտերի համար, որ փշրվեն, և որ դեկավարները չշարունակեն իրենց հպարտության մեջ մնալ, այլ իմաստությամբ կառավարեն ժողովրդին, և (5) որ Աստծո կամքը կատարվի:

Ես պետք է ասեմ, որ Աստված աղոքներին պատասխանում է: Ին Երկնավոր Հայրը վերոհիշյալ բոլոր խնդրանքներին պատասխանել է: Պատերազմն ավարտվեց, խաղաղություն հաստատվեց, և Նա մեր դեկավարներին իմաստություն պարզեց:

Կարծում եմ՝ ձեզնից շատերը չեն համաձայնի այն ամենի հետ, ինչ կասեմ 4-րդ և 5-րդ խնդրանքների վերաբերյալ: Ակզրում ես նոյնպես ձեզ պես էի մտածում:

Սենք հայրտ ազգ ենք, և մեր ցավալի պատմության պատճառով մեր սրտերը քարացած են: Սենք կարծես թե ավելի շատ մտահոգված ենք մեր հայրտությամբ, քան մեր ժողովրդով: Բայց Աստված մտահոգված է մարդկանցով: Նա չի ուրախանում մահով: Վարչապետ Փաշինյանի կատարած քայլը աղոքքի պատասխան էր: Նա ինքն իրեն խոնարհեցրեց և իր ժողովրդի բարության համար ընդունեց հրադադարի պայմանները՝ շիտեւելով իր հպարտությանը:

Աստված բոլոր ազգերի դատավորն է, ուստի ճիշտ ժամանակին և Իր կամքի համաձայն նրանք, որ հպարտ են, կկանգնեն Աստծո բարկության առջև, եթե դարձի չգան ու չփշըն իրենց քարացած սրտերը:

Իսկ ինչ վերաբերում է աղոքքիս վերջին կետին, ապա այս հակամարտության ելքի իմ փափազն էր Արցախն ամբողջությամբ ունենալը: Այնուամենայնիվ, իմ խնդրանքն այն էր, որ Աստծո կամքը կատարվեր, և այդպես էլ եղավ: Նա գերիշխան է Իր բոլոր ստեղծագործությունների, կառավարությունների, իշխանությունների և ազգերի վրա:

Այժմ աղոքքս մեկ կետի շուրջ է պտտվում՝ միաբան մնալ ու դադարեցնել ներքին կոիվները: Այս պատերազմի ընթացքում մենք Սփյուռքում և հայրենիքում պնդում էինք, որ մեր միակ հույսն Աստված է. արդյոք սա պարզապես բանավոր արտահայտությո՞ւն էր, թե՞ իսկապես սրտի անկեղծ խոսք: Եթե պնդում ենք, որ քրիստոնյա երկիր ենք, ապա պետք է քրիստոնեավայել վարվենք: Եթե այդպես չանենք, ուրեմն թշնամին կհաղթի մեզ:

Որպես քրիստոնյա երկիր՝ մենք պետք է լույսի փարոս լինենք մութ աշխարհի համար: Պետք է մեր վկայությունը բարձր պահենք:

Անառակ որդու պես մենք՝ որպես ազգ, թե՛ Սփյուռքում և թե՛ հայրենիքում նախազահից մինչև հասարակ քաղաքացին պետք է ապաշխարենք ու Աստծուն վերադառնանք: Թո՛ղ Քրիստոսը նստի մեր կյանքի գահին: Թող որ Նա լինի մեր Թագավորը: Այդ ժամանակ Նա բազմաթիվ օրինություններ կշնորհի մեզ: Միայն այդ ժամանակ թշնամին կպարտվի:

Հակոբ Ժաք Խաչոյան

## Վաղը

**Մ**եզանից շատերը ապագայի ծրագրեր ունեն: Մենք ծրագրում ենք այն, ինչին ուզում ենք հասնել նախքան որոշակի տարիքի հասնելը: Այնուամենայնիվ, որքան ն հաճախ են մեր կազմած ծրագրերը սխալ ուղղությամբ ընթանում: «Վաղվա վերաբերյալ մի պարծենա» խոսքի ճշմարտությունը (Առակ. 27:1) շատ ակնհայտ է դառնում: Քանի որ չգիտենք, թե ինչ է լինելու վաղը, մենք ավելի քիչ հիմքեր ունենք՝ պարծենալու այն ամենով, ինչ նախատեսում ենք անել առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում:

Հակոբոսը մեզ համար նոյն ուղերձն ունի 4:13-16-ում. «Հիմա լսեցիք, դուք, որ ասում եք. «Այսօր կամ վաղը գնանք այսինչ քաղաքը և այնտեղ մնանք մեկ տարի, առևտուր անենք և վաստակենք. մինչդեռ դուք չգիտեք, թե վաղն ինչ է լինելու. քանի որ ի՞նչ է ձեր կյանքը: Այն գոյրջի է, որ կարծ ժամանակով երևում ու անհետանում է: Դրա փոխարեն պետք է ասեիք. «Եթե Տերը կամենա ու ապրենք, այս կամ այն բանը կանենք»: Բայց հիմա պարծենում եք ձեր ամբարտավանությամբ: Այս կարգի բոլոր պարծանքները չարիք են»:

«Եթե Տերը կամենա» արտահայտությունը մեզ համար կարևոր առաջնորդող սկզբունք է: Եթե Պողոսը իր երկրորդ միսիոներական ճանապարհորդության ընթացքում կարծ ժամանակով այցելեց Եփեսոս, նրան խնդրեցին ավելի երկար մնալ, սակայն նա ասաց, որ կվերադառնա՝ իրենց հետ ժամանակ անցկացնելու, եթե Տերը կամենա: Մենք պետք է միշտ պատրաստ լինենք՝ Տիրոջ կողմից առաջնորդվելու և՝ առօրյա կյանքում, և՝ քրիստոնեական մեր ծառայության մեջ:

Վաղվա հետ կապված մեր ամենամեծ խնդիրներից մեկը ապագայի մասին անհանգստանալն է: Լեռան քարոզում (Մատթ. 6:31-34) Տերը մարդկանց պատվիրեց շանհանգստալ: Մարդիկ անհանգստանում էին, թե ինչ պետք է ուտեն, խմեն կամ հազնեն: Տերն ասաց, որ սրանք հեթանոսների մտահոգություններն են: Այնուամենայնիվ, մեր

Երկնային Հայրը գիտի, որ այս բոլոր բաները պետք են մեզ: Մեր խնդիրը նախ Աստծո Թագավորությունն ու Նրա արդարությունը փնտրելն է: Աստված խոստացել է տալ մեզ անհրաժեշտ բաները: Այս տեսանկյունից մենք չպետք է անհանգստանանք վաղվա օրվա համար:

Խելամիտ չէ վաղվա օրը պլանավորել՝ առանց Աստծո կամքը փնտրելու: Ղուկ. 12:19-20-ը արձանագրում է հարուստ մարդու մասին առակը, որը լավ բերք ուներ: Քանի որ նրա բերքը շատ առատ էր. նա որոշեց քանդել շտեմարանները և նորերը՝ ավելի մեծերը կառուցել: Դրանից հետո նա հեշտ կյանք կապրեր, քանի որ բավական բարիքներ ուներ երկար տարիներ ապրելու համար: Բայց նա Աստծո մասին չի մտածում. այդ գիշեր նրանից պահանջվեց իր կյանքը: Ապագայի մեր ծրագրերում հարկավոր է հիշել, որ Աստված պետք է լինի առաջինը:

Վերջապես, անմտություն է պարծենալ այն բանով, ինչ նախաձեռնում ենք կատարել ապագայում: Գ Թագ. 20:11-ում կարևոր մի դաս կա. «Իր զենքը մեջքին կապողը, բող չպարծենա այն մեջքից հանողի պես»: Գողիաքը պարծենում էր, որ կհաղթի Դավթին, բայց չապուց իր պարծենկոտությունը վայելելու համար: Մենք չգիտենք մեր արածի արդյունքները: Սիզուցե հաջողակ լինենք, միզուցե՝ ոչ: Եկեք Աստծո առաջնորդությունն ու օգնությունը փնտրենք, որպեսզի կատարվի այն, ինչ Նրան է հաճելի:

Ճիշտ է ապագան ծրագրելը, բայց չպետք է ծրագրենք առանց Աստծո կամքն ու Նրա փառքը փնտրելու:

Դոն Սթորմը

**C** Առիհավորում ենք մեր ընթերցողներին Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան կապակցությամբ և մաղթում, որ 2021 թ.-ը օրինակ տարի լինի բոլորիդ համար: Նաև փափագում ենք, որ գալիք տարին լինի Տեր Հիսուսի երկրորդ գալստյան տարին:

## **Մենք քաջալերանքի կարիք ունենք, երբ հիասթափված ենք**

**ԵԲԲ. 10:23-35**

### **1. Իսահակը քաջալերանքի կարիք ուներ. «Ես քեզ կօրհնեմ սովի երկրում»:**

«Եվ ՏԵՇԸ երևաց նրան և ասաց. «Եզիպտոս մի իջիր, այլ բնակ-  
վիր այն երկրում, որը ես կասեմ: Պանդոխտ եղիր այն երկրում ու  
ես քեզ հետ կլինեմ և քեզ կօրհնեմ, որովհետև այս բոլոր երկրները  
քեզ ու քո սերունդին եմ տալու ու քո հայր Աքրահամին տված խոս-  
տումս պիտի հաստատեմ»» (Ծննդ. 26:2-3):

(Ծննդ. 26:12-13):

Երբ Իսահակը իր ապրած երկրում հանդիպեց սննդի պակասի, Աստված նրան ասաց, որ չգնա Եզիպտոս, այլ շարունակի ապրել սովի երկրում, և խոստացավ, որ կօրհնի նրան այդ երկրում: Եվ Աստված օրինեց Իսահակին այդ երկրում: Նա մշակեց այդ հողը և առատ թերթ ստացավ: Իսահակը շարունակեց բարձրանալ ու բարձ-  
րանալ, մինչև շատ մեծ դարձավ:

Աստված նույն ձևով կարող է օրինել մեր կյանքերը այն վայրում, ուր հանդիպել ենք ընդհարումների, անբավարարության և ցավերի: Մենք փորձում ենք փախչել իրավիճակից, որտեղ հանդիպել ենք ցա-  
վի և սպառնալիքների:

Աստված խոստանում է ցուցաբերել Իր զորությունը Իր զավակնե-  
նի օգտին, հատկապես այնտեղ, ուր շոշափվում է մեր շահերը, և որ-  
տեղ մենք մեր հոգևոր պայքարն ենք մղում:

### **2. Ո-արել. «...և Աստված հիշեց Ո-արելին»:**

«Եվ Աստված հիշեց Ո-արելին ու Աստված լսեց Ո-արելի աղոթքը  
ու բացեց նրա արգանդը» (Ծննդ. 30:22):

Ո-արելը երկար ժամանակ անպտուի էր, թվում էր, թե Աստված մո-

ռացել է նրա մասին: Ուրիշները մեկը մյուսի ետևից երեխաներ էին ունենում: Թվում էր, թե Ռաքելը միակն է, որ զրկված է Աստծո օրինությունից: Եվ ահա այն ժամանակ, երբ թվում էր, թե Աստված մոռացել էր նրան, Սուրբ Գիրքն ասում է. «Տերը հիշեց Ռաքելին»: Ռաքելը մոռացված չէր: Աստված հիշեց նրան, լսեց նրա աղոթքը, բացեց նրա արգանդը և մի որդի պարզեց: Նա իր որդու անունը Հովսեփի որդին մյուս երեխաներից ավելի բարձր դասվեց: Հովսեփը փայլուն ապագա էր ունենալու. դառնալու էր Եցիպտոսի կառավարիչ: Զնայած Ռաքելի օրինությունը միանգամից չեկավ, բայց, միևնույն է, այն ավելի յուրահատուկ և հիասքանչ էր, քան մյուսներին:

Մենք չպետք է հիասթափվենք, այլ պետք է հուսալով և վստահությամբ սպասենք այն յուրահատուկ օրինությանը, որ Աստված պատրաստել է մեզ համար:

### **3. Հակոբ. «Որովհետև Լաբանի թեզ արած բոլոր բաները տեսա» (Ծննդ. 31:12):**

(Ծննդ. 31:6-7, 12:41)

Երբ Հակոբը քասան տարի տառապում էր Լաբանի անարդար վերաբերմունքից, Աստված Հակոբին ասաց, որ թողնի Լաբանին և վերադառնա իր հոր Երկիրը: Նա Հակոբին ասաց. «Լաբանի թեզ արած բոլոր բաները տեսա»: Աստված Հակոբին ազատեց Լաբանից: Զնայած Լաբանը Երկար ժամանակ անարդարացիորեն էր վարվել և խարբել էր Հակոբին, բայց դա անհայտ չէր մնացել Տիրոջը: Աստված տեսնում էր բոլոր այն անարդարությունները և ճնշումները, որոնց հանդիպում էր Հակոբը: Եվ եկավ ժամանակը, երբ Տերը միջամտեց և ազատեց Հակոբին:

Աստված գիտի այն ամենը, ինչի միջով մենք անցնում ենք մեր կյանքում, այն բոլոր ցավերն ու տառապանքը, որոնք տեսնում ենք:

Աստված գիտի բոլոր այն անարդարությունները և վատ վերաբերմունքները, որոնց հանդիպում ենք: Նա միջամտում և ազատում է մեզ հակառակորդների և շարագործների ձեռքից:

#### **4. Եղիա. «Քո գնալու ճանապարհը երկար է»:**

Նա անապատի մեջ մեկ օրվա ճանապարհ գնաց, մի գիհու տակ նստեց և սրտանց մեռնել ուզեց. «Տե՛ր, բավական է, առ իմ հոգին, ո-դովիհետև իմ հայրերից լավը չեմ»: Ահա մի հրեշտակ դիպավ նրան և ասաց. «Վե՛ր կաց, կե՛ր»: Եղիան նայեց և ահա զլխի մոտ մոխրի տակ եփված շոք և մի կուժ ջուր կար: Կերավ, խմեց ու նորից քնեց: Տիրոջ հրեշտակը դարձաւ երկրորդ անգամ դիպավ նրան ու ասաց. «Վե՛ր կաց, կե՛ր, որովհետև քո գնալու ճանապարհը երկար է» (Գ. Թագ. 19:4-7):

Գ. Թագ. 19:1-7, 15-16, Դ. Թագ. 2:1-11:

Երբ Եղիան հանդիպեց Հեղարելի՝ իր կյանքի համար վտանգավոր հետապնդումներին, նա հուսահատվեց և աղոթեց, որ մեռնի. նա Աստծուն ասաց. «Տե՛ր, բավական է, առ իմ հոգին»: Նա գտնում էր, որ ավելի լավ է մեռնի, քան ապրի, քանի որ չեր կարողանում տեսնել իր կյանքի նպատակը, բայց չեր գիտակցում, որ Աստված դեռ գործ ունի իր համար: Աստված ուղարկեց Իր հրեշտակին և զորացրեց նրան, ասաց, որ նա դեռ երկար ճանապարհ ունի գնալու: Դեռ շատ կարևոր հանձնարարություններ կային, որոնք Աստված ուներ նրա համար, որ պիտի իրականացներ: Նա երկու երկրների համար պետք է թագավորներ օծեր, նաև պետք է օծեր իր հետևորդին՝ Եղիսեին: Դրանցից բացի՝ Աստված Իր ծրագրում ուներ, որ Եղիան չեր մահանալու, այլ հրեղեն կառող ողջ-ողջ Երկինք էր տարվելու: Այդ իրավիճակում Եղիան ի վիճակի չեր գիտակցելու Աստծո ծրագիրն իր կյանքի համար: Դրա փոխարեն նա աղոթում էր, որ մեռնի: Բայց Աստված քաջալերեց նրան, օգնեց իրականացնել իր կյանքի նպատակը և կոչումը:

Մեր կյանքում ժամանակ առ ժամանակ իհասրափում ենք ծանր քեռների պատճառով և աղոթում ենք, որ արդեն հոգնել ենք դժվարություններից և ուզում ենք, որ Նա մեզ մոռանա: Մենք չենք գիտակցում, որ մեզ երկար ճանապարհ է ապասկում, և Աստված դեռ շատ գործ ունի մեզ համար:

Դոկտ. Չեսլով Բասսարա  
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

## Աստծո արհեստանոցում

**Սաղմոս 51:1-12**

**Մ**ի օր՝ կիրակի առավոտյան, երբ դիմավորում էի եկեղեցի մտնող մարդկանց, նկատեցի, որ մի մարդ կանգնել է դռան մոտ և չի ուզում ներս գալ: Նա հարբածի կամ թմրամոլի տպավորություն էր թողնում, թվում էր, թե երկար ժամանակ ո՞չ լվացվել է, ո՞չ էլ սանրվել: Երբ մոտեցա նրան, ասաց, որ պարզապես եկել է եկեղեցին տեսնելու: Հաջորդ կիրակի նորից եկավ և կարճ զրոյցից հետո հեռացավ:

Մեկ անգամ ևս եկավ, այս անգամ արդեն կոկիկ էր և սրափ: Նա սկսեց ինձ պատմել իր կյանքում առաջացած խառնաշփորի մասին: Նրա կյանքը կործանվել էր ոչ միայն խմիչքի ու թմրանյութերի, այլ նաև իր անբարու ու ապականված վարքագծի պատճառով:

Նորից էր եկել եկեղեցի և ուզում էր վերականգնվել: Նոր կյանք էր ուզում, որի համար պատրաստ էր զին վճարելու: Իր մեղքերը խոստովանելուց և Աստծուց ներում ու փրկություն հայցելուց հետո նա Հիսուս Քրիստոսին հրավիրեց իր սրտի մեջ և խնդրեց իր Տերը դառնալ: Հրաշք տեղի ունեցավ. նա դարձավ վերատին ծնված մարդ և սկսեց ոտքից գլուխ փայլել: Հետագայում այս մարդը մկրտվեց և դարձավ եկեղեցու անդամ ու հավատարմորեն ծառայեց մինչև այդ քաղաքից հեռանալը: Սա ընդամենը մեկն է այն բազմաթիվ մարդկանց վերականգնված կյանքերի օրինակներից, որոնք կերտվել են Աստծո արհեստանոցում, որտեղ բազմաթիվ կոտրված ու փշրված կյանքեր են վերականգնվել ու փրկվել, խաղաղությամբ ու նպատակալացությամբ լցվել:

Աստված ոչ թե մերժում և կործանում է մարդկանց կյանքերը, այլ նորոգում է, վերականգնում, կարգավորում և փրկում: Հիսուսն ասում է.

«Ինձ մոտ եկեք, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և ես համար կտամ ձեզ» (Աստք. 11:28):

Դավիթ թագավորը մեղքով ապականված, կորսված մարդ էր: Նա

կորցրել էր ուրախությունը. ապականվել էր և՝ հոգեպես, և՝ ֆիզիկապես: Լիովին կորցրել էր հույսը, և դա տևեց այնքան ժամանակ, մինչև որ հիշեց Աստծո արհեստանոցը: Եվ նա վազեց Աստծուն ընդառաջ ու բացականչեց.

«Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, քո ողորմության պես, և քո մեծ ողորմության պես ջնջի՛ր իմ անօրինությունները: Դարձյալ տո՛ւր ինձ քո փրկության ուրախությունը, և կամավոր հոգով հաստատի՛ր ինձ» (Սաղ. 51:1-2, 12):

Իմ արհեստանոցում ես վերանորոգում եմ անսարք ռադիոտեխնիկական սարքեր, որպեսզի դրանք մի քիչ էլ աշխատեն: Աստված իր արհեստանոցում վերականգնում—վերակենդանացնում է մարդկանց կորած ու մերժված հոգիները և հավիտենական կյանք տալիս նրանց:

Քանի որ Աստված ինձ ևս նորոգել է իր արհեստանոցում ու հավիտենական կյանք պարզեցել, ես ինձ պարտավորված եմ զգում տարածելու այն բարի լուրը, որ Աստծո արհեստանոցը բաց է ու գործում է հանապազորյա՝ 24 ժամ անընդմեջ:

Դու արդեն եղե՞լ ես Աստծո արհեստանոցում, հուսով եմ՝ այս:

Հովսեփի Հովսեփյան

<sup>«<sup>1</sup></sup> Երանելի է այն մարդը, որն անաստվածների խորհրդով չի ընթանում, մեղավորների ծանապարհում չի կանգնում, ոչ էլ հեգնողների աթոռին նստում.

<sup>2</sup> Այլ նրա հաճույքն Աստծո օրենքն է, և գիշեր-ցերեկ

Նրա օրենքի մասին է խորհրդածում:

<sup>3</sup> Նա լինելու է ջրի վտակներին տնկված ծառի նման, որ իր պտուղը ժամանակին է տալիս. նրա տերևը չի թառամելու, և ինչ էլ որ անի, հաջողվելու է:

<sup>4</sup> Այսպես չեն անաստվածները, այլ նման են հարդափոշու, որին հովն է ցրում:

<sup>5</sup> Մրա համար էլ անաստվածները դատաստանում չեն կանգնելու, ոչ էլ մեղավորները՝ արդարների հավաքում,

<sup>6</sup> Քանզի ՏԵՐԸ գիտի արդարների ծամփան, իսկ անաստվածների ծամփան կորչելու է»:

(Սաղմու 1:1-6)

## **ԳԵՐԻՆԵՐԸ**

1. Այս վերջին կռվում մեր Ղարաբաղի,  
Շատ արյուն թափվեց տեղի-անտեղի:  
Ու խոսքը մեր մեջ անալի-աղի,  
Չլուծված հարցեր կան մինչև հիմի:
  
2. Ատելությունը երկու կողմում էլ  
Սաստիկ էր այնքան, այնքան ահարկու,  
Որ գերադասում էին մեռնել,  
Քան թե հայտնվել ձեռքը թշնամու:
  
3. Տանջում, խոշտանգում էր թուրքը գերուն,  
Լավ չեր վիճակը նաև թուրք գերու:  
Մարդկանց սրտերին հին օձն էր տիրում,  
Ու փափագ տալիս ջնշել իրարու:
  
4. Եվ սկսվել էր մի մեծ առևտուր,  
Թշվառ, անօգնական գերիների,  
Կարծացրել, դարձել էին այրվող հուր,  
Սրտերը մարդկանց որդիների:
  
5. Նաև փոխվում էր գերին գերու հետ,  
Սի հատուկ, շատ խիստ կարգ ու կանոնով,  
Եվ այս հարցերը հին ոսդի հետ  
Զափիւմ, ձևվում էր կարծես քանոնով:

6. Այսօր երկուսին են քաց քողնելու,  
Կեղտն ու թնջուկը ոջլու մազերին,  
Մի կողմում հյուծված հայն էր փոխվելու,  
Ահա պատրաստ է և քուրք ազերին:
7. Մինչև ատամները խմբերը զինված,  
Երկու կողմերում հսկում լուածայն,  
Նշված տեղերից, նշված վայրկյանին  
Պետք է շարժվեն դժբախտները այն:
8. Հազիվ քարշ տալով ծանրացած ոտքերն,  
Դանդաղ քայլում են նրանք դեպի կյանք,  
Նրանց ասված է, լավ պահեն մտքերն,  
Կանգնելը մահ է, նայելը՝ հանցանք:
9. Հանկարծ հայացքներն անծանոթների,  
Լուռ հանդիպեցին բոլորի առաջ,  
Եվ մոռանալով ցավը ոտների՝  
Վազեցին նրանք իրար ընդառաջ:
10. Երկնային մի ուժ գերբնական,  
Մազնիսի նման մեկնեկու ձգում,  
Եվ փաթաթվեցին ճիշտ եղբոր նման,  
Ինչպես հայրն է իր որդուն գրկում:
11. Գլուխներն իրար ուսերի գցած,  
Ո՞նց են հեկեկում ու դառը լալիս,  
Ծով են աչքերը վաղուց չորացած,  
Հակոբն ու Եսավն են միտքս գալիս:

12. Լուր հեծկտում են նաև զինվորներն.  
Մոռացած կարգը դաժան գործարքի,  
Ու չեն ծլվում նույնիսկ թռչուններն՝  
Բողոք հայտնելով մարդկային վարքի:
13. Զկա՛, չի եղել երբեք աշխարհում  
Ճարտասան մեկը, կամ հմուտ գրող,  
Որ կարողանար այնքան բան ասել,  
Որքան լրությունն այն խորհրդավոր:
14. Եվ ո՞րն է դասը այս լուր քարոզի,  
Ադամի մոլոր, չար որդիներիս:  
Մարդն առանց Աստծո նման է խոզի,  
Ապառաժ քար է սիրտը բոլորիս:
15. Եվ գերիմերը միմյանց քշնամի,  
Սիրեցին իրար, բայց զիտե՞ք ինչու.  
Մեկը մյուսով եղան կենդանի,  
Փրկազին դարձան նրանք իրարու:
16. Իմ քաղցր Հիսուս, Դու իմ փրկազին,  
Դու ճշմարիտ վեմ, Դու իմ ապավեն,  
Ջեզ վայել է փառք, պատիվ քանկազին,  
Հավիտյաններից հավիտյանս ամեն:

Գառնիկ Աբրեյան